Հաստատված է՝

«Ճարտարապետության և շինարարության
Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի
գիտական խորհրդի 2014թ. հունիսի 3-ի նիստում
Արձանագրություն № 01-06/14

գիտխորհրդի նախագահ, ռեկտոր՝

Գ.Շ. Գալստյան

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
«ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

I. Ընդհանուր դրույթներ

1. «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ համալսարան) գիտական խորհրդի (այսուհետ՝ գիտական խորհուրդ) կանոնակարգը մշակված է «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, համալսարանի կանոնադրության և այլ իրավական ակտերի հիման վրա:
2. Գիտական խորհուրդը համալսարանի ուսումնական, գիտական և գիտատեխնիկական գործունեությունը պլանավորող, համակարգող ու կարգավորող կոլեգիալ մարմին է, ապահովում է համալսարանի ուսումնական, գիտական, գիտատեխնիկական և հետազոտական գործունեությունը:
3. Սույն կանոնակարգը սահմանում է համալսարանի գիտական խորհրդի ձևավորման և գործունեության իրականացման կարգը, աշխատակարգը, նիստերի ընթացակարգը, իրավասությունները, գիտական խորհրդի նախագահի, քարտուղարի և անդամների գործառույթները, պրոֆեսորադասախոսական և այլ պաշտոնների տեղակալման, համալսարանի հոգաբարձուների խորհրդի

անդամության թեկնածուների, ընտրության կազմակերպման և գիտական խորհրդում որոշումների ընդունման քվեարկության կարգը:

II. Գիտական խորհրդի ձևավորումը

4. Գիտական խորհուրդը ձևավորվում է համալսարանի կանոնադրության համաձայն, համալսարանի աշխատողների և ուսանողության ներկայացուցիչներից: Համալսարանի աշխատողների կազմից գիտական խորհրդի կազմում ընդգրկվում են ի պաշտոնե և ընտրությամբ:

5. Գիտական խորհրդի կազմում ի պաշտոնե ընդգրկվում են ռեկտորը (նախագահ), պրոռեկտորները, դեպարտամենտների ղեկավարները, գիտական քարտուղարը, ուսումնական վարչության պետը, գլխավոր հաշվապահը, մասնաճյուղերի, կենտրոնների տնօրենները, ֆակուլտետների դեկանները, ամբիոնների վարիչներ, արհմիութենական կազմակերպության նախագահը, ուսանողական խորհրդի նախագահը, ինչպես նաև ռեկտորի նշանակմամբ այլ կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներ, առաջատար դասախոսներ ու գիտաշխատողներ, գիտության, ճարտարապետության և շինարարության ոլորտի առաջատար մասնագետներ, համալսարանի ուսանողության ներկայացուցիչներ:

6. Ի պաշտոնե և ռեկտորի կողմից նշանակվող անդամների թիվը չի կարող գերազանցել գիտական խորհրդի անդամների թվի 50 տոկոսը:

7. Գիտական խորհրդի ընտրովի կազմը ձևավորվում է համալսարանի աշխատողների և ուսանողության ներկայացուցիչներից: Գիտական խորհրդի կազմում ընտրվում են համալսարանի աշխատողների 20 ներկայացուցիչ: Համալսարանի ուսանողության ներկայացուցիչների թիվը չի կարող պակաս լինել գիտական խորհրդի անդամների թվի 25 տոկոսից:

8. Համալսարանի աշխատողների ներկայացուցիչներից գիտական խորհրդի կազմի ընտրովի անդամներին առաջադրում են համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումները, իսկ ուսանողության ներկայացուցիչներից՝ համալսարանի ուսանողական խորհուրդը: Ուսանողության կողմից գիտական խորհրդի անդամների առաջադրումը և ընտրությունը կատարվում է համալսարանի ուսանողական խորհրդի կանոնադրությամբ սահմանված կարգով:

III. Գիտական խորհրդի գործունեությունը և իրավասությունները

9. Համալսարանի գիտական խորհրդի գործունեությունն իրականացվում են համալսարանի կանոնադրությունից բխող սույն կանոնակարգով նախատեսված իրավասությունների սահմաններում.

10. Համալսարանի գիտական խորհուրդը՝

1) հաստատում է իր կանոնակարգն ու աշխատակարգը.

2) քննարկում և ռեկտորին ու հոգաբարձուների խորհուրդ է ներկայացնում առաջարկություններ՝

ա) համալսարանի ուսումնական, գիտական հետազոտությունների հիմնական ուղղությունների վերաբերյալ,

բ) գիտահետազոտական աշխատանքների թեմատիկայի ու ծրագրերի վերաբերյալ,

գ) գիտական կադրերի պատրաստման վերաբերյալ,

դ) միջազգային կրթական, գիտական համագործակցության հարցերի և ծրագրերի վերաբերյալ,

ե) նոր ստորաբաժանումներ ստեղծելու վերաբերյալ.

3) հաստատում է ֆակուլտետների կանոնադրությունները, այլ կառուցվածքային ստորաբաժանումների կանոնակարգերը, համալսարանի գործունեության ոլորտների կարգերը և ընթացակարգերը, բացառությամբ տնտեսական ընկերությունների ստեղծման կամ դրանցում մասնակցության, առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների ստեղծման ու դրանց կանոնադրությունների հաստատման դեպքերի.

4) ռեկտորի ներկայացմամբ հաստատում է ըստ մասնագիտությունների համալսարանին վերապահված պետական պատվերից դուրս վճարովի հիմունքներով ընդունելության տեղերը.

5) քննարկում և հրատարակության է երաշխավորում համալսարանի աշխատողների ու համալսարանի մասնագիտություններով այլ կազմակերպություններում աշխատող հեղինակների մենագրությունները, ժողովածուները և մասնագիտական այլ աշխատանքները,

6) քննարկում է կրթության և գիտության զարգացման հրատապ հիմնահարցեր, լսում գիտական հաղորդումներ.

7) քննարկում է ուսումնական, գիտական գործունեության գլխավոր և հեռանկարային ուղղությունները.

8) լսում է հաշվետվություններ ու հաղորդումներ կատարվող կարևորագույն գիտահետազոտական և գիտամեթոդական, ինչպես նաև համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանքների արդյունքների մասին.

9) քննարկում է նոր մասնագիտություններով կրթական ծրագրեր իրականացնելու մասին և այն ներկայացնում հաստատման կրթության պետական կառավարման լիազորված մարմին, ըստ մասնագիտությունների հաստատում է ուսումնական պլանները.

10) համալսարանի կանոնադրական նպատակներն իրականացնելու անհրաժեշտությունից ելնելով կազմում է մշտական և ժամանակավոր հանձնաժողովներ.

11) քննարկում է հարցեր՝

ա) «Համալսարանի պատվավոր դոկտոր», «Համալսարանի պատվավոր պրոֆեսոր», «Համալսարանի վաստակավոր պրոֆեսոր», «Համալսարանի վաստակավոր գիտաշխատող» կոչումներ շնորհելու մասին,

բ) մրցանակներ, անվանական կրթաթոշակներ տալու մասին,

գ) մեդալներով պարգևատրելու մասին:

12) քննարկում և հաստատում է.

ա) հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամների, դեկանների, դեպարտամենտների ղեկավարների, ամբիոնների վարիչների ու պրոֆեսորադասախոսական կազմի ընտրության կանոնակարգերը,

բ) պատվավոր կոչումներ շնորհելու, համալսարանի մեդալներով պարգևատրելու, մրցանակներ ու անվանական կրթաթոշակներ տալու և այլ կանոնակարգերը,

գ) պետական պատվավոր կոչումների և պետական պարգևների ներկայացնելու կարգերը.

13) իրականացնում է պրոֆեսորադասախոսական կազմի, ֆակուլտետի դեկանի, դեպարտամենտի ղեկավարի, ամբիոնի վարիչի ընտրությունները.

14) շնորհում է դոցենտի և պրոֆեսորի գիտական կոչումներ.

15) իրականացնում է համալսարանի կանոնադրությունից բխող՝ ուսումնական, հետազոտական և մեթոդական գործունեության հետ կապված այլ լիազորություններ:

11. Գիտական խորհուրդը քննարկված հարցերի վերաբերյալ ընդունում է համապատասխան որոշումներ: Որոշումներն ընդունվում են բաց կամ փակ գաղտնի քվեարկությամբ: Քվեարկության ձևի տարաձայնության դեպքում որոշումներն ընդունվում են փակ գաղտնի քվեարկությամբ:

IV. Գիտական խորհրդի նիստը

12. Գիտական խորհուրդը գործունեությունն իրականացնում է նիստերի միջոցով:
13. Գիտական խորհրդի նիստերը, որպես կանոն, գումարվում են յուրաքանչյուր ամիսը մեկ անգամ: Նիստի գումարման ժամկետի և օրակարգի մասին գիտական խորհրդի անդամները տեղեկացվում են ոչ ուշ, քան նիստից 3 օր առաջ:Անհրաժեշտության դեպքում կարող են գումարվել արտահերթ նիստեր՝ գիտական խորհրդի նախագահի համաձայնությամբ:
14. Արտահերթ նիստերը կարող են գումարվել՝
1) գիտական խորհրդի նախագահի (ռեկտորի) նախաձեռնությամբ,
2) համալսարանի պրոռեկտորների նախաձեռնությամբ,
3) գիտական խորհրդի անդամների 1/4-ի նախաձեռնությամբ,
4) ֆակուլտետի գիտական խորհրդի նախաձեռնությամբ,
5) ռեկտորատի որոշմամբ,
6) ուսանողական խորհրդի նախաձեռնությամբ:

Սույն կետով սահմանված անձանց նախաձեռնությամբ գիտական խորհրդի նիստ գումարելու դեպքում նիստի օրակարգը կազմում է նախաձեռնողը՝ համալսարանի ռեկտորի համաձայնությամբ:
15. Համալսարանի գիտական խորհրդի նիստը համարվում է իրավազոր՝ նրա անդամների 2/3-ի ներկայության դեպքում: Որոշումներն ընդունվում են խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների պարզ մեծամասնությամբ, բաց քվեարկությամբ, գիտական խորհրդի որոշմամբ քվեարկությունը կարող է կատարվել փակ գաղտնի քվեարկությամբ:
16. Գիտական խորհրդի նիստը նախագահում է գիտական խորհրդի նախագահը (համալսարանի ռեկտորը): Համալսարանի ռեկտորի բացակայության դեպքում գիտական խորհրդի նիստը նախագահում է ռեկտորի կողմից նշանակված ժամանակավոր պաշտոնակատարը:
17. Գիտական խորհրդի նախագահը՝

1) կազմակերպում է գիտական խորհրդի աշխատանքները,

2) գումարում է գիտական խորհրդի նիստերը, որոշում նիստի անցկացման վայրը և ժամկետը,

3) կազմում է գիտական խորհրդի նիստի օրակարգը՝ ելնելով համալսարանի գործունեության հիմնական ուղղություններից: Գիտական խորհրդի նախագահը նիստերի օրակարգը կազմելիս կարող է այն նախապես քննարկել ռեկտորատի նիստում, համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումներում, գիտական խորհրդի հանձնաժողովներում, ուսանողական խորհրդում, ինչպես նաև շահառուների հետ:

4) ամփոփում է օրակարգի հարցերի քննարկումները,

5) հաստատում է գիտական խորհրդի որոշումները և հաստատված կանոնները, կանոնակարգերն ու կարգերը,

6) նշանակում է գիտական խորհրդի քարտուղարին,

7) իրականացնում է գիտական խորհրդի գործունեության հետ կապված և համալսարանի կանոնադրությամբ սահմանված այլ գործառույթներ:

18. Գիտական խորհրդի քարտուղարը՝

1) նախապատրաստում է գիտական խորհրդի նիստերը, յուրաքանչյուր նիստի վերջնական օրակարգը, նիստի ժամանակի և վայրի մասին ծանուցում է գիտական խորհրդի անդամներին,

2) գիտական խորհրդի նիստն սկսելուց առաջ կատարում է գիտական խորհրդի անդամների գրանցում, որը հաստատագրվում է նիստին ներկա անդամների ստորագրությամբ:

3) գիտական խորհրդի նիստում ներկայացնում է տեղեկություններ գիտական խորհրդի նիստին անդամների մասնակցության մասին,

4) արձանագրում է գիտական խորհրդի նիստերը, ստորագրում արձանագրությունները,

5) պատրաստում է քվեարկությանը մասնակցող գիտական խորհրդի անդամների ու հավակնորդների ցուցակները, քվեարկության արդյունքների գրանցման ձևաթղթերը և դրանք հանձնում հաշվիչ հանձնաժողովի նախագահին,

6) պատրաստում է գիտական խորհրդի որոշումների նախագծերը: Ընդունված որոշումները հինգ աշխատանքային օրվա ընթացքում հանձնում է ըստ պատկանելության և կատարման,

7) ստորագրում է գիտական խորհրդի որոշումները:

19. Գիտական խորհրդի անդամները՝

1) մասնակցում են գիտական խորհրդի նիստերին, օրակարգի հարցերի և համալսարանի գործունեության քննարկմանը, հայտնում կարծիքներ,

2) ներկայացնում են առաջարկություններ քննարկվող հարցերի վերաբերյալ,

3) հարցեր են ուղղում գիտական խորհրդի նախագահին և ելույթ ունեցողներին,

4) մասնակցում են որոշումների ընդունման և ընտրությունների քվեարկությանը:

V. Գիտական խորհրդի նիստի ընթացակարգը և աշխատակարգը

20. Գիտական խորհրդի նիստը բացում է գիտական խորհրդի նախագահը և քննարկման է ներկայացնում նիստի օրակարգի նախագիծը: Օրակարգի նախագիծը քննարկվում և հաստատվում է գիտական խորհրդի նիստին ներկա անդամների քվեարկությամբ՝ ձայների պարզ մեծամասնությամբ:

21. Գիտական խորհրդի յուրաքանչյուր նիստի օրակարգի նախագիծը կարող է քվեարկությամբ համալրվել կամ փոխարինվել այլ հարցերով:

22. Նիստի օրակարգի ձևավորումից հետո, գիտական խորհրդի նախագահը պարզաբանում է օրակարգի հարցերի քննարկման ընթացակարգը:

23. Գիտական խորհրդի նիստում օրակարգի հարցերը ներկայացնում (զեկուցում) է նախագահը կամ նախագահի հանձնարարությամբ գիտական խորհրդի քարտուղարը կամ տվյալ հարցը նախապատրաստող զեկուցողը:

24. Գիտական խորհրդում հարցերի քննարկումն սկսվում է օրակարգի հերթական հարցի զեկուցմամբ: Օրակարգի հարցը զեկուցելուց հետո նիստին մասնակիցների կողմից կարող են հարցեր ուղղվել զեկուցողին և ելույթ ունեցողին՝ այնուհետև քննարկվող հարցի վերաբերյալ կատարվում է մտքերի փոխանակում (ելույթներ զեկուցման վերաբերյալ), որով ավարտվում է հարցի քննարկումը:

25. Օրակարգի հարցերի քննարկման համար որպես կանոն սահմանվում է հետևյալ աշխատակարգը.

ա) զեկուցման համար՝ մինչև 20 րոպե,

բ) հարցերի (հարց ու պատասխանի) համար՝ մինչև 15 րոպե,

գ) յուրաքանչյուր ելույթի համար՝ մինչև 5 րոպե:

26. Գիտական խորհրդի որոշմամբ կարող է սահմանվել այլ աշխատակարգ: Աշխատակարգի սահմանման վերաբերյալ առաջարկությունը ընդունվում է բաց քվեարկությամբ:
27. Զեկուցողին հարցեր կարող են ուղղել միայն գիտական խորհրդի անդամները: Գիտական խորհրդի անդամները հարցեր կարող են ուղղել նաև գիտական խորհրդի նախագահին, գիտական քարտուղարին, հանձնաժողովների նախագահներին, ինչպես նաև քննարկվող հարցին անմիջապես առնչվող և նիստին ներկա համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին:
28. Օրակարգի քննարկվող յուրաքանչյուր հարցի վերաբերյալ ելույթներն սկսում են գիտական խորհրդի անդամները, որոնք կարող են ելույթները եզրափակել կայանալիք քվեարկության նկատմամբ իրենց մտադրությամբ և առաջարկությամբ: Անհրաժեշտության դեպքում, գիտական խորհրդի նախագահը կարող է ելույթների համար ձայն տալ նաև հրավիրվածներին: Այդ դեպքում չի թույլատրվում կարծիք հայտնել քվեարկության վերաբերյալ:
29. Յուրաքանչյուր հարցի քննարկումն ավարտվում է գիտական խորհրդի նախագահի եզրափակիչ ելույթով:
30. Օրակարգի հարցի քննարկման ավարտին հաջորդում է որոշման ընդունումը: Գիտական խորհրդի որոշմամբ որոշումներն ընդունվում են բաց կամ փակ գաղտնի քվեարկությամբ: Օրակարգի յուրաքանչյուր հարցի վերաբերյալ որոշումը կարող է ընդունվել հարցի քննարկումից անմիջապես հետո կամ բոլոր հարցերի քննարկումից հետո՝ օրակարգի հարցերի հերթականությամբ:
31. Գիտական խորհրդում հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամների, դեկանների, դեպարտամենտի ղեկավարների, ամբիոնների վարիչների, պրոֆեսորադասախոսական և այլ պաշտոնների մրցույթով ընտրության, մրցանակներ տալու, ինչպես նաև դոցենտի, պրոֆեսորի գիտական կոչումների շնորհման վերաբերյալ գործերով որոշումներն ընդունվում են փակ գաղտնի քվեարկության արդյունքներով գիտական խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների պարզ մեծամասնությամբ, եթե գիտական խորհուրդն այդ մասին այլ որոշում չի ընդունում

VI. Մրցույթի անցկացման ընթացակարգը

32. Գիտական խորհրդում մրցույթն իրականացվում է մրցույթի մասին հրապարակված հայտարարությունում նշված պայմաններով: Գիտական խորհրդի նախագահը պարզաբանում է մրցույթի անցկացման ընթացակարգը:

33. Պրոֆեսորադասախոսական և այլ պաշտոնների հավակնորդների առաջադրման կարգը սահմանվում է «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի մրցութային ընթացակարգով ընտրովի պաշտոնների ընտրության մասին» կարգով: Պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչում շնորհելու մասին հարցերը գիտական խորհրդի քննարկմանը ներկայացնելու կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետությունում գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ հաստատված կարգով:

34. Պրոֆեսորադասախոսական և այլ թափուր պաշտոնների ընտրության, ինչպես նաև դոցենտի, պրոֆեսորի գիտական կոչում շնորհելու համար ներկայացված գործերով հավակնորդների տվյալները ներկայացնում (զեկուցում) է գիտական խորհրդի քարտուղարը կամ նախագահի հանձնարարությամբ այլ անձ:

35. Մրցույթին մասնակցող հավակնորդները կարող են ներկա գտնվել գիտական խորհրդի նիստին և ներկայացնել ծրագիր:

36. Հավակնորդների տվյալները ներկայացնելուց հետո սկսվում է քննարկումը՝ հարց ու պատասխան, ելույթներ, առաջարկություններ: Քննարկումները դադարեցվում են նախագահի առաջարկությամբ՝ գիտական խորհրդի որոշմամբ: Քննարկման ավարտից հետո հավակնորդներին կարող է տրվել լրացուցիչ ելույթի հնարավորություն:

37. Յուրաքանչյուր հավակնորդի քննարկումն ավարտվում է նախագահի եզրափակիչ ելույթով: Քննարկման արդյունքում գիտական խորհրդի որոշմամբ հավակնորդն առաջադրվում է փակ գաղտնի քվեարկության և ընդգրկվում է քվեաթերթիկում կամ մերժվում է քվեաթերթիկում ընդգրկվելը:

38. Փակ գաղտնի քվեարկության համար պատրաստվում են քվեաթերթիկներ: Յուրաքանչյուր տեղի (խմբի) կամ պաշտոնի հավակնորդների համար պատրաստվում է առանձին քվեաթերթիկ:

39. Փակ գաղտնի քվեարկություն կազմակերպելու և արդյունքներն ամփոփելու համար գիտական խորհրդի նիստին ներկա անդամներից ընտրվում է հաշվիչ հանձնաժողով՝ առնվազն 3 անձից բաղկացած կազմով: Թեկնածուներն առաջադրվում են գիտական խորհրդի նիստում:

40. Հաշվիչ հանձնաժողովն իր կազմից ընտրում է նախագահ: Հաշվիչ հանձնաժողովի որոշումներն ընդունվում են բաց քվեարկությամբ՝ ձայների պարզ մեծամասնությամբ: Հաշվիչ հանձնաժողովի որոշումներն ու արձանագրությունները ստորագրում են հաշվիչ հանձնաժողովի նախագահը և անդամները:

41. Հաշվիչ հանձնաժողովը պատրաստում է փակ գաղտնի քվեարկության քվեաթերթիկները, կազմակերպում քվեարկությունը՝ ապահովում քվեարկության համար անհրաժեշտ պայմաններ, ընտրողների ազատ ընտրական իրավունքի իրականացումը և պաշտպանությունը:

42. Պրոֆեսորադասախոսական և այլ պաշտոնների մրցույթով ընտրության համար նախատեսված քվեաթերթիկում նշվում է քվեաթերթիկի լրացման կարգը, քվեաթերթիկի ձախ կողմում՝ թեկնածուների հերթական համարում այբբենական կարգով նշվում է թեկնածուի ազգանունը, անունը, հայրանունը: Մեկից ավելի հավակնորդների առկայության դեպքում քվեաթերթիկի աջ կողմում յուրաքանչյուր թեկնածուի ազգանվան դիմաց նշվում է «կողմ եմ» բառը, իսկ դրա դիմաց՝ առանց նշումի վանդակ: Մեկ հավակնորդի առկայության դեպքում հավակնորդի ազգանվան դիմաց նշվում են «կողմ եմ» և «դեմ եմ» բառերը, դրանց դիմաց տեղադրվում են առանց նշումի վանդակներ:

Պրոֆեսորադասախոսական և այլ պաշտոնների մրցույթով ընտրության, ինչպես նաև դոցենտի, պրոֆեսորի գիտական կոչումների շնորհման համար քվեաթերթիկի ձևը սահմանված է սույն կանոնակարգի թիվ 1 և 2 հավելվածներում:

43. Քվեաթերթիկների գրանցման ցուցակները վարելու, քվեաթերթիկները բաժանելու և քվեատուփը հսկելու համար, հաշվիչ հանձնաժողովի նախագահը կատարում է աշխատանքի բաժանում հաշվիչ հանձնաժողովի անդամների միջև:

VII. Քվեարկության կարգը

44. Գիտական խորհրդում բաց կամ փակ գաղտնի քվեարկությանը մասնակցելու իրավունք ունեն գիտական խորհրդի նիստին մասնակցող բոլոր անդամները՝ հավասար իրավունքով:

45. Բաց քվեարկությունը կատարվում է գիտական խորհրդի նիստի դահլիճում՝ գիտական խորհրդի նիստին ներկա անդամների մասնակցությամբ: Որոշումն ընդունվում է ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հաշվառումը կատարում է ձայներ հաշվող հանձնաժողովը:

46. Փակ գաղտնի քվեարկությունը կատարվում է քվեարկության համար առանձնացված սենյակում կամ առանձին խցիկում:
47. Քվեաթերթիկները քվեարկողներին հանձնում է հանձնաժողովի անդամը: Քվեաթերթիկ ստացողը ստորագրում է ցուցակում՝ իր անվան դիմաց: Քվեաթերթիկները բաժանելուց հետո չհանձնված քվեաթերթիկները տեղադրվում է առանձին ծրարի մեջ և վավերացվում հանձնաժողովի նախագահի և անդամների ստորագրությամբ:
48. Քվեաթերթիկն ստանալուց հետո քվեարկողն անցնում է քվեարկության սենյակ կամ քվեարկության խցիկ և ինքնուրույն, գաղտնի լրացնում է քվեաթերթիկը: Մեկից ավելի հավակնորդների առկայության դեպքում քվեարկողը քվեաթերթիկի իր նախընտրած թեկնածուների (թեկնածուի) օգտին քվեարկելու համար այդ թեկնածուների (թեկնածուի) ազգանվան դիմաց «կողմ եմ» բառի դիմաց առկա առանց նշումի վանդակում նշում է V-աձև նշանը: Մեկ հավակնորդի առկայության դեպքում կողմ քվեարկելու համար քվեարկողը V-աձև նշանը նշում է հավակնորդի ազգանվան դիմաց «կողմ եմ» բառի դիմաց առկա առանց նշումի վանդակում, իսկ դեմ քվեարկելու դեպքում նույն նշանը նշում է «դեմ եմ» բառի դիմաց առկա առանց նշումի վանդակում: Այդ վանդակներում այլ նշումներ չեն կատարվում: Նշումները կատարվում են միայն գրիչով:
49. Քվեարկողը քվեաթերթիկում քվեարկության մասին նշում կատարելուց հետո՝ քվեարկության սենյակում կամ քվեարկության խցիկում ծալում է քվեաթերթիկը և գցում նախօրոք ստուգված և կնքված քվեատուփի մեջ:
50. Քվեարկությունն ավարտվելուց անմիջապես հետո հաշվիչ հանձնաժողովը հաշվարկում և ամփոփում է քվեարկության արդյունքները՝ հանձնաժողովի նախագահը, հանձնաժողովի անդամների ներկայությամբ առանձին սենյակում բացում է քվեատուփը և տեսակավորում բոլոր քվեաթերթիկները, հանում մեկ քվեաթերթիկ, հայտարարում քվեաթերթիկի վավեր կամ անվավեր լինելու մասին: Վավեր քվեաթերթիկի դեպքում հայտարարում է նաև, թե ինչպես է քվեարկված, ապա ցուցադրում հանձնաժողովի անդամներին ու ըստ քվեաթերթիկում կատարված քվեարկության նշումի հայտարարում և թեկնածուի ազգանվան դիմաց գրանցում է քվեարկության արդյունքը, որից հետո հանում է հաջորդ քվեաթերթիկը և նույնը կրկնում բոլոր քվեաթերթիկների համար:
51. Քվեարկության արդյունքում վավեր են համարվում.
ա) այն քվեաթերթիկները, որոնցում նշված թեկնածուներից յուրաքանչյուրի ազգանվան դիմաց առանց նշումի վանդակներից միայն մեկում է կատարված V-աձև նշումը,

բ) քվեաթերթիկում չկան չնախատեսված նշումներ, ընդգծումներ, գրառումներ:

52. Անվավեր են ճանաչվում այն քվեաթերթիկները, որոնցում.

ա) որևէ թեկնածուի ազգանվան դիմաց առանց նշումի վանդակներում V-աձև նշում չի կատարված,

բ) քվեաթերթիկում կան չնախատեսված նշումներ, ընդգծումներ, գրառումներ,

գ) որևէ թեկնածուի ազգանվան դիմաց առկա առանց նշումի վանդակներում կատարված է մեկից ավել V-աձև նշում:

53. Քվեաթերթիկն անվավեր ճանաչելու մասին որոշումը կայացնում է հաշվիչ հանձնաժողովը:

54. Քվեատուփում առկա բոլոր քվեաթերթիկները տեսակավորելուց հետո հաշվիչ հանձնաժողովի նախագահը հանձնաժողովի անդամների ներկայությամբ մեկ առ մեկ հաշվարկում է անվավեր համարված քվեաթերթիկների թիվը, յուրաքանչյուր թեկնածուին կողմ կամ դեմ քվեարկված քվեաթերթիկների թիվը, ամփոփում է քվեարկության արդյունքները և կազմում արձանագրություն: Արձանագրության ձևը սահմանված է սույն կանոնակարգի թիվ 3 հավելվածում:

55. Արձանագրությունը կազմելուց հետո յուրաքանչյուր անձի (խմբի) համար հաշվիչ հանձնաժողովի նախագահը ծրարում է քվեարկությանը մասնակցած քվեաթերթիկները, վավերացնում իր և հանձնաժողովի անդամների ստորագրությամբ և կցում արձանագրությանը:

56. Քվեարկության արդյունքների արձանագրությունը կազմվում է ըստ արդյունքների:

57. Արձանագրության մեջ թեկնածուների ցուցակը տրվում է ըստ ստացած ձայների քանակի նվազման հաջորդականության: Կողմ ձայների քանակը որոշվում է ըստ թեկնածուի «կողմ եմ» վանդակների դիմաց առանց նշումի վանդակներում կատարված V-աձև նշանների:

58. Հիմք ընդունելով քվեարկության արդյունքները հաշվիչ հանձնաժողովն ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝

1) ընտրությունում (մրցույթում) հաղթողներ ճանաչելու մասին:

2) քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու և կրկնակի քվեարկություն անցկացնելու մասին,

3) Մրցույթը չկայացած համարելու մասին:

Մրցույթը համարվում է չկայացած և հայտարարված պաշտոնները մնում են թափուր, եթե՝

ա) առաջին փուլի քվեարկության արդյունքում թեկնածուներից ոչ մեկը չի ստացել քվեարկությանը մասնակցած գիտական խորհրդի անդամների ձայների 50%-ից ավելին կամ 50%-ը հաղթահարած հավակնորդների ստացած ձայները հավասար են,

Սույն ենթակետում նշված արդյունքների դեպքում նույն նիստում կազմակերպվում է կրկնակի քվեարկություն, որին մասնակցում են առավել բարձր թվով ձայներ ստացած հավակնորդները: Եթե մրցույթը մեկից ավելի տեղերի համար է, կրկնակի քվեարկությանը մասնակցում են 50%-ից ավելի ձայներ ստացած հավակնորդները, իսկ մեկ տեղի համար՝ առավել ձայներ ստացած երկու հավակնորդները,

բ) Կրկնակի քվեարկության արդյունքում հավակնորդներից ոչ մեկը չի ստացել քվեարկությանը մասնակցած գիտական խորհրդի անդամների ձայների 50%-ից ավելին,

գ) անվավեր ճանաչված քվեարկության դեպքում կազմակերպված կրկնակի քվեարկությունը ճանաչվել է անվավեր:

59. Մեկից ավելի տեղերի համար քվեարկության արդյունքում հաղթող է ճանաչվում այն թեկնածուն, որը ստացել է քվեարկությանը մասնակցած գիտական խորհրդի անդամների ձայների 50%-ից առավել քանակությամբ կողմ ձայներ, իսկ մեկ տեղի համար քվեարկության արդյունքում հաղթող է ճանաչվում՝ քվեարկությանը մասնակցած գիտական խորհրդի անդամների ձայների 50%-ը հաղթահարած այն թեկնածուն, որը ստացել է առավել քանակությամբ կողմ ձայներ:

60. Հանձնաժողովի նախագահը գիտական խորհրդի նիստում հրապարակում է փակ գաղտնի քվեարկության արդյունքները, նշելով գիտական խորհրդի նիստին ներկա և քվեարկությանը մասնակցած անդամների թիվը, բաժանված, չբաժանված և քվեատուփում հայտնաբերված քվեաթերթիկների քանակը, շեշտում կողմ, դեմ, անվավեր արդյունքներն ու առաջարկում հաստատել հաշվիչ հանձնաժողովի արձանագրությունը:

61. Գիտական խորհուրդը բաց քվեարկությամբ, ձայների պարզ մեծամասնությամբ հաստատում է հաշվիչ հանձնաժողովի արձանագրությունը և քվեարկության արդյունքները:

62. Նույն պաշտոնի համար մեկից ավելի անձանց քվեարկության արդյունքում հավասար քանակով ձայներ ստացած հավակնորդների միջև անցկացվում է քվեարկության երկրորդ փուլ: Երկրորդ փուլում հաղթող է ճանաչվում այն թեկնածուն, որը ստացել է ընտրողների ձայների 50%-ից ավելի քանակությամբ կողմ ձայներ:

63. Պրոֆեսորադասախոսական պաշտոնների ընտրության դեպքում, եթե քվեարկության արդյունքում մնացել են թափուր տեղ(եր), ապա այդ տեղ(եր)ի համար անցկացվում է քվեարկության երկրորդ փուլը այն թեկնածու(ներ)ի համար, որոնք ստացել են գիտական խորհրդում քվեարկությանը մասնակցած անդամների ձայների առնվազն 35%-ը:

63.1. Երկրորդ փուլում հաղթող են ճանաչվում առավել ձայներ ստացած, քվեարկվող պաշտոնների քանակից ոչ ավել թվով այն թեկնածուները, որոնք ստացել են գիտական խորհրդում քվեարկությանը մասնակցած անդամների ձայների 50%-ից ավելին:

63.2. Առաջին կամ երկրորդ փուլի քվեարկության արդյունքներով, եթե անվավեր քվեաթերթիկների թվաքանակը ավել է համապատասխան փուլի քվեարկությանը մասնակցած գիտական խորհրդի անդամների 35%-ից, ապա քվեարկության արդյունքները ճանաչվում են անվավեր և տվյալ փուլում թեկնածուների նույն կազմով կազմակերպվում է կրկնակի քվեարկություն նույն նիստում կամ հրավիրվում է գիտական խորհրդի նոր նիստ:

64. Հավակնորդն իրավունք ունի բողոքարկել ընտրության արդյունքները: Այդ դեպքում ընտրությունից հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում հավակնորդը գրավոր հիմնավորված բողոքը ներկայացնում է բողոքարկող հանձնաժողովին, որը երեք օրվա ընթացքում տալիս է գրավոր եզրակացություն:

65. Բողոքարկող հանձնաժողովի կազմում ընդգրկվում են Համալսարանի գիտական խորհրդի քարտուղարը (նախագահ), ռեկտորի ներկայացուցիչը (նախագահի տեղակալ), իրավաբանական բաժնի պետը, արհկոմի նախագահը, ուսխորհրդի նախագահը:

66. Բողոքարկող հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե ներկա են հանձնաժողովի հինգ անդամներից առնվազն չորսը: Բողոքարկող հանձնաժողովը եռօրյա ժամկետում եզրակացություն չտալու դեպքում հրավիրվում է գիտական խորհրդի արտահերթ նիստ տվյալ բողոքի քննարկման նպատակով բողոքարկող նոր ժամանակավոր հանձնաժողով ձևավորելու օրակարգով:

VIII. Եզրափակիչ դրույթներ

67. Սույն կանոնակարգն ուժի մեջ է մտնում Համալսարանի գիտական խորհրդում ընդունվելուց և համալսարանի ռեկտորի կողմից հաստատվելուց անմիջապես հետո:

68. Սույն կանոնակարգը հաստատվում, փոփոխվում կամ լրացվում է Համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ:

69. Այն հարցերը, որոնք ներառված չեն սույն կանոնակարգում, կարգավորվում են Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտերով և Համալսարանի կանոնադրությամբ:

Գիտական քարտուղար՝ **Լ.Հ. Լևոնյան**

03 հունիսի 2014թ.

գիտխորհրդի որոշում № 01-06/14